ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.01.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/16

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.01.2022թ. թիվ 26/26-1/635-2022 գրությամբ «Ազուռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Միասնական սոցիալական ծառայության 07.01.2022թ. թիվ 02/12-1/558-2022 գրության հիման վրա, 14.01.2022թ. թիվ 26/26-1/635-2022 գրությամբ նախաձեռնել է «Ազուռ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ազուռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ազուռ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Ազուռ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/16 ընթացակարգի շրջանակներում 20.01.2022թ. ժամը 09:09-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Միասնական սոցիալական ծառայության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Միասնական սոցիալական ծառայությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 07.01.2022թ. թիվ 02/12-1/558-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Միասնական սոցիալական ծառայության և «Ազուռ» ՍՊ ընկերության միջև 23.03.2021 կնքված թիվ ՍԱԾ ԳՀԱՊՁԲ-21/3-2 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «Ազուռ» ՍՊ ընկերությունը պայմանագրով սահմանված ժամկետում՝ (Պայմանագրի թրվ 1 հավելված) Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրացուցային օրվա ընթացքում, պետք է մատակարարեր 30 հատ երկշերտ թղթե անձեռոցիկ, 12 հատ օդի հոտազերծիչ, 10 հատ մաքրող մածուկներ և փոշիներ, 10 հատ հատակի լվացման լաթ:

Պայմանագրի կողմի՝ տվյալ դեպքում վաճառողի կողմից, չեն մատակարարվել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված վերը նշված ապրանքները:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7, 2.1.7.1 կետերը՝ Միասնական սոցիալական ծառայությունը 2021 թվականի դեկտեմբերի 29-ին միակողմանի լուծել է Միասնական սոցիալական ծառայության և «Ազուռ» ՍՊ ընկերության միջև 23.03.2021 կնքված թիվ ՍԱԾ ԳՀԱՊՁԲ-21/3-2 գնման պայմանագիրը:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ Ձեր միջնորդությունը՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված միջոցառումներ իրականացնելու համար»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/16 ընթացակարգի շրջանակներում 20.01.2022թ. ժամը 09:09-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/16 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/16 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Միասնական սոցիալական ծառայության և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 23.03.2021թ. կնքվել է թիվ «ՍԱԾ ԳՀԱՊՁԲ-21/3-2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքների մատակարարման համար սահմանվել է հետևյալը.

Ապրանքի					
Հ/Հ	Անվանումը	Չափման միավորը	Ընդհանուր քանակը	Մատակարարում	
				հասցեն	ժամկետը
6	Թղթե անձեռոցիկ, երկշերտ	հատ	30	ք.Երևան, Նալբանդյան 13	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հետո 45 օրացուցային օրվա ընթացքում
8	Հոտազերծիչ, օդի	հատ	12	ք.Երևան, Նալբանդյան 13	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հետո 45 օրացուցային օրվա ընթացքում
10	Մաքրող մածուկներ և փոշիներ	հատ	10	ք.Երևան, Նալբանդյան 13	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հետո 45 օրացուցային օրվա ընթացքում
16	Հատակի լվացման լաթ	հատ	10	ք.Երևան, Նալբանդյան 13	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հետո 45 օրացուցային օրվա ընթացքում

3. Միասնական սոցիալական ծառայությունը, «Ազուռ» ՍՊԸ-ին ուղղված 03.01.2022թ. թիվ 02/12-1/112-2022 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Միասնական սոցիալական ծառայության և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 23.03.2021թ. կնքվել է թիվ «ՍԱԾ ԳՀԱՊՁԲ-21/3-2» գնման պայմանագրի շրջանակներում «Ազուռ» ՍՊԸ-ն պայմանագրով սահմանված ժամկետում՝ (Պայմանագրի թիվ 1 հավելված) Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրացուցային օրվա ընթացքում, պետք է մատակարարեր 30 հատ երկշերտ թղթե անձեռոցիկ, 12 հատ օդի հոտազերծիչ, 10 հատ մաքրող մածուկներ և փոշիներ, 10 հատ հատակի լվացման լաթ:

Պայմանագրի կողմի՝ տվյալ դեպքում վաճառողի կողմից, չեն մատակարարվել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված վերը նշված ապրանքները:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7, 2.1.7.1 կետերը՝ Միասնական սոցիալական ծառայությունը 2021 թվականի դեկտեմբերի 29-ին միակողմանի լուծել է Միասնական սոցիալական ծառայության և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 23.03.2021թ. կնքված թիվ ՍԱԾ ԳՀԱՊՁԲ-21/3-2 գնման պայմանագիրը: (...)»:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 03.01.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 14.01.2022թ. թիվ 26/26-1/635-2022 գրությունը, Միասնական սոցիալական ծառայության 07.01.2022թ. թիվ 02/12-1/558-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, Միասնական սոցիալական ծառայության և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 23.03.2021թ. կնքվել է թիվ «ՍԱԾ ԳՀԱՊՁԲ-21/3-2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքների մատակարարման համար սահմանվել է հետևյալը.

Ապրանքի					
Չ/Հ	Անվանումը	Չափման միավորը	Ընդհանուր քանակը	Մատակարարում	
				հասցեն	Ժամկետը
6	Թղթե անձեռոցիկ, երկշերտ	հատ	30	ք.Երևան, Նալբանդյան 13	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հետո 45 օրացուցային օրվա ընթացքում
8	Հոտազերծիչ, օդի	հատ	12	ք.Երևան, Նալբանդյան 13	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հետո 45 օրացուցային օրվա ընթացքում

10	Մաքրող մածուկներ և փոշիներ	հատ	10	ք.Երևան, Նալբանդյան 13	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հետո 45 օրացուցային օրվա ընթացքում
16	Հատակի լվացման լաթ	հատ	10	ք.Երևան, Նալբանդյան 13	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հետո 45 օրացուցային օրվա ընթացքում

Միասնական սոցիալական ծառայությունը, «Ազուռ» ՍՊԸ-ին ուղղված 03.01.2022թ. թիվ 02/12-1/112-2022 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Միասնական սոցիալական ծառայության և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 23.03.2021թ. կնքվել է թիվ «ՍԱԾ ԳՀԱՊՁԲ-21/3-2» գնման պայմանագրի շրջանակներում «Ազուռ» ՍՊԸ-ն պայմանագրով սահմանված ժամկետում՝ (Պայմանագրի թիվ 1 հավելված) Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրացուցային օրվա ընթացքում, պետք է մատակարարեր 30 հատ երկշերտ թղթե անձեռոցիկ, 12 հատ օդի հոտազերծիչ, 10 հատ մաքրող մածուկներ և փոշիներ, 10 հատ հատակի լվացման լաթ:

Պայմանագրի կողմի՝ տվյալ դեպքում վաճառողի կողմից, չեն մատակարարվել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված վերը նշված ապրանքները:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7, 2.1.7.1 կետերը՝ Միասնական սոցիալական ծառայությունը 2021 թվականի դեկտեմբերի 29-ին միակողմանի լուծել է Միասնական սոցիալական ծառայության և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 23.03.2021թ. կնքված թիվ ՍԱԾ ԳՀԱՊՁԲ-21/3-2 գնման պայմանագիրը: (...)»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 03.01.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ***10 օրից ավելի***:

Պայմանագրի 8.1 կետի համաձայն՝ պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Այսպիսով՝ վերը շարադրված փաստական հանգամանքների ուժով՝ արձանագրում եմ, որ «Ազուռ» ՍՊԸ-ն խախտել է իր և Միասնական սոցիալական ծառայության միջև 23.03.2021թ. կնքված Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Ազուռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.01.2022թ. թիվ 26/26-1/635-2022 գրությամբ «Ազուռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ազուռ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**